

յունական աւանդութեան համաձայն եւ այս նշանակութեան վրայ յենլով՝ մոգերը իրենց վերագարծին առաջին գիշերը Թէոտոսի վանքին ստորերկրեայ քարայրը կ'ապաստանին և ճիշդ հոս էր որ վանքին հիմնագիրը նախապէս կը ճգնէր: Այն ժամանակները այս ճանապարհը սովորական ճամբայ մըն էր, ինչպէս կը գիտէ Թեոսոսի վարջին հեղինակը:

Թէոտոս նշանաւոր հանդիսացաւ նաև իր առաջինական առատաձեռնութեամբը: 513-518ի Պաղեստինեան սովին, Թէոտոս «հասարակաց գանձանակը» եղած էր. լաւագոյն յարաբերութիւն կը մշակէր Մար Սաբայի և ուրիշներու հետ. հարիւր տարի ապրեցաւ եւ բացառիկ յուզարկաւորութեամբ թաղուեցաւ մոզերու ֆարայրին մէջ: Իր վանքին տարեգարծի յիշատակը սովորութիւն դարձաւ տօնել Մայիս 6ին և Դեկտ. 2ին, համաձայն Երուսաղէմի ծիսարանին (անդ. էջ 363): Աւանդաբար կը պատմուի թէ իր առատաձեռնութիւնը Թէոտոս կը հոգար վանքին նիւթական տկար միջոցներով, և բազմաթիւ սովահարներ օրերով կը կշտանային վանքին մէջ, Աստուած իսկոյն անոր ուտեստի պակասը կը հոգար: Ս. Կուսի տօնին օրը հազարաւոր ողորմութիւն ուզողներ կային, սակայն անոնց ուզածնուն չափ սնունդ կը տրուէր: Ամէնքն ալ ուտելէ և կշտանալէ վերջ՝ իւրաքանչիւրը որքան որ կրնար ուտելիք կը տանէր իր հետ: Պատմիչը կ'ըսէ թէ սահկա եղաւ Անապասին մեջ Փրկչին հրաշխին կրկնութիւնը (E. F. B. էջ 251-252): (Թէոտոսի վանքին պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. (էջ 361-368):

ժա) Մար-Սաբայի աւանդութիւնները. — Մար-Սա-